

**ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ⁵⁰**

**Էլլաղա Բաղդասարյան
Իննա Մկրտչյան**

Բանալի բառեր՝ ծնողագուրկ, ծնողական խնամքից զրկված, սոցիալական աղապտացիա, կառուցվածքային բաղադրատարեր, հոգեբանական հարաբերակցություն, ինքնահաստատում, ինքնահրացում, դրական հույզեր, ապրելու պահանջնունք, անբարենպաստ պայմաններ:

Սոցիալական հարմարման խնդիրն ուսումնասիրվել է շատ սոցիոլոգների, մանկավարժների և հոգեբանների կողմից: Այս քննարկվել է Լ.Ս. Վիգոտսկու, Ա.Ա. Նալչաջյանի, Ա.Վ. Պետրովսկու, Ա.Վալլոնի, Ժ. Պիաժեի աշխատություններում:

Աղապտացիան բնորոշվում է որպես օրգանիզմի կառուցվածքի և գործառույթների հարմարումը շրջապատող աշխարհի պայմաններին: Մարդու աղապտացիան ունի երկու կողմ՝ կենսաբանական և հոգեբանական: Աղապտացիայի հոգեբանական կողմը, որը հաճախ անվանում են սոցիալական աղապտացիա, մարդու՝ որպես անձի հարմարումը հասարակության մեջ ապրելուն, այդ հասարակության պահանջներին և սեփական պահանջնունքներին, դրապատճառներին, հետաքրքրություններին համապատասխան: Հոգեբանական աղապտացիան իրականացվում է տվյալ հասարակության նորմերի և արժեքների յուրացման ձանապարհով: Այս ձանապարհն անցնում է յուրաքանչյուր անհատ իր զարգացման ընթացքում [1]: Այսպիսով՝ սոցիալական աղապտացիան սոցիալական միջավայրի պայմաններին անհատի ակտիվ հարմարման անընդհատ գործընթաց է:

Սոցիալական հարմարման իրենց առանձնահատուկ ձանապարհով անցնում են բոլոր անհատները: Այս գործընթացի ընթացքում անհատը յուրացնում է սոցիալական փորձը, որն իրականացվում է շվման և գործունեության մեջ: Որոշ մանկավարժներ և հոգեբաններ կարծում են, որ սոցիալական աղապտացիան անձնավորության սոցիալիզացիայի փուլերից մեջն է, նրա մի մասը: Մյուսները հարմարում և սոցիալիզացիան դիտում են որպես անձնավորության և հասարակության փոխազդեցության միասնական գործընթաց: Ընդ որում աղապտացիան արտահայտում է մարդու հարմարումն իր համար նոր առարկայական գործունեությանը՝ հանդես գալով որպես սոցիալիզացիայի պայման, անձնավորության կայացման գործընթաց: Ըստ մեկ այլ կարծիքի՝ անձնավորության սոցիալիզացիան հասարակության մեջ անհատի աղապտացիայի անհրաժշշության պայման է: [2]

Հարմարվածությունը մարդու հարմարման աստիճանն է, որը դրսևորվում է նրա սոցիալական դիրքի ինքնազգացողության, սեփական ենուկ և կյանքով բավարարվածության կամ անբավարարվածության միջոցով:

Սոցիալական աղապտացիայի գործընթացը կամքի առաջին տարիներին ունի ակնհայտ առանձնահատկություններ: Դրանցից են աղապտացիայի, հարմարվածության ցուցանիշները, ինչպես նաև աղապտացիայի գործընթացի և արդյունքի վրա ազդող գործուները: Բոլոր գործուները կարելի են բաժանել ըստ բնութագրող հատկությունների:

⁵⁰ Հոդվածն ընդունվել է 26.03.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

յունների սոցիալական ադապտացիայի պայմանների: Որպես պայման կարելի է առանձնացնել ընտանիքը և երեխայի շրջապատը: Մրանք երեխայի սոցիալական հարմարնան այն միկրոպայմաններն են, որոնք որոշչի դեր են խաղում երեխայի անձի հիմնական հատկությունների ծևավորման գործում: Լինելով երեխայի առաջին սոցիալական աշխարհը՝ ընտանիքը մեծ մասամբ կանխորշում է նրա կյանքի ուղին: Բացի գիտակցական, նպաստակառողկած դաստիարակության, որը տալիս են երեխային ծնողները, նրա վրա ազդում է ընտանեկան կյանքի անրող հոգեբանական մթնողորոտը: Ընդ որում այդ ազդեցության արդյունքը կուտակվում է տարիքի հետ: Փոստորեն չկա երեխայի վարքի գրեթե ոչ մի սոցիալական կամ հոգեբանական կողմ, որը կախված չինի նրա ընտանեկան պայմաններից ներկայում կամ անցյալում: [3]:

Ծնոտանիքը նպաստում է երեխայի մեջ կարևոր այնպիսի ամեատական աճնական որակների ծևավորմանը, ինչպիսիք են վստահությունը, մոտիկ մարդկանց սերը և նրանց վստահելու պահանջմունքը, կարեկցելու, օգնելու ընդունակությունը, տարբեր սոցիալական իրավիճակներում մարդկանց հետ փոխադրելու ունակությունը, իր՝ որպես անձնավորության ինքնահաստատման, սեփական անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները և պահանջմունքները դրսելու ընդունակությունը, մյուսներին և սեփական եւը աղեկված ընկալելու և հասկանալու ունակությունը: [4]

Ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաներն իրենց սոցիալական ադապտացիայի և այս պայմանից կամ գորկ են, կամ այն մասնակիորեն է ազդում նրանց վրա: Ծնոտանիքում տիրող միջնորոտը ծնողների հետ հոգական շվիման առկայությունը, երեխայի դիրքը ընտանիքում, դաստիարակության ոչը պայմանավորում են երեխայի սոցիալական ադապտացիայի գործընթացի արդյունավետությունը և հարմարվածության մակարդակը:

Սոցիալական հարմարման մեխանիզմներից են ընդորինակումը, նույնականացումը, խթանումը, պատիժը, մանկական խաղը և այլն:

Ա. Կալլոնը խաղը բնութագրում է որպես սոցիալական միջոց, որի օգնությամբ երեխան յուրացնում է իրեն շրջապատող առարկաների, սոցիալական հարաբերությունների աշխարհը: Խաղի միջոցով նա ընդորինակում է մեծահասակներին և նրանց վարքի ձևերը:

Մեծահասակն այստեղ դիտվում է անկախ իր կոնկրետ սոցիալական և միջամանային դերից, որը նա կատարում է այն փոքր խմբի կառուցվածքում, որտեղ իրականացվում է նրա համատեղ գործունեությունը երեխայի հետ: Մեծահասակն ազդելով երեխայի վրա, նրա մեջ առաջացնում է ելակետային, հիմնային այնպիսի արդյունքներ, որոնք հետագայում ազդում են երեխայի սոցիալական հարմարման գործընթացի և հարմարվածության վրա: Նման կարևորագույն արդյունքներից կարելի է նշել այն, որ երեխայի մեջ ծևավորվում է սոցիալական աշխարհին պատկանելիության զգացում, «մենք»-ի զգացում:

Մայրը առաջին կերպարն է, որը ներկայացնում է աշխարհը: Այսինքն մոր / կամ նրան փոխարինող անձի/ հետ կապվածության տիպը որոշում է երեխայի վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հետագա հարմարումը սոցիալական միջավայրին: Մայրը երեխայի համար հուսալի պաշտպանություն է: [5]

Երեխան ինքն իրեն ընկալում է իր նկատմամբ մոտիկ մեծահասակի վերաբերմունքի միջոցով: Օրինակ՝ հուսալի և անվտանգ կապվածության դեպքում երեխան ընկալում է ինքն իրեն որպես սիրված, հարգանքի արժանի, քաջ, խելացի, իսկ մեծահասակին որպես սիրո, պաշտպանության և հարգանքի աղբյուր: Եթե նրա կապվածությունն անհուսալի է և ոչ անվտանգ, նա ինքն իրեն վերաբերվում է որպես մերժվածի,

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

չսիրվածի, որը ոչ մի բանի ընդունակ չէ, իսկ նրա կապվածության առարկան դաշնում է վախի վտանգի աղբյուր: Այսպիսով՝ երեխայի վերաբերմունքը սեփական ես-ի մասին և նրա պատկերացումներն իր մասին որոշում են նրա վերաբերմունքը մոտիկ մեծահասակների նկատմամբ / առաջին հերթին մոր/: Ահա թե ինչու սիրո և հասկանալու մթնոլորտում ապրող երեխաները սոցիալական ադապտացիայի, ինչպես նաև ուսուցման, շիման ավելի քիչ խնդիրներ են ունենում: Եվ ընդհակառակը՝ ծնող-երեխա հարաբերությունների խաթարումը հանգեցնում է տարբեր սոցիալ-հոգեբանական, մանկապարժական խնդիրների և բարդույթների ձևավորմանը:

Կյանքի առաջին տարում երեխաների զարգացման համար օլիսավոր դեր են խաղում մոր հետ երեխայի հարաբերությունները, որոնք ծնում են նրա նկատմամբ կապվածություն և մեծ մասամբ պայմանավորում են նրա հոգեկան զարգացման հետագա ընթացքը: Կապվածությունն ունի որոշակի առանձնահատկություններ՝

- մայրը կամ կապվածության այլ օբյեկտն ավելի լավ, քան ցանկացած այլ մարդ, կարող է հանգստացնել երեխային:
- երեխան գերադասում է խաղալ կապվածության օբյեկտի հետ, իսկ երբ վշտացած է, հենց նրա մոտ է միսիթարություն փնտորում:
- կապվածության օբյեկտի ներկայությամբ երեխաներն իրենց ավելի վստահ և հանգիստ են զգում, այնքան էլ չեն վախենում:

Երեխայի լիարժեք զարգացման համար կարևոր են երկու ծնողներն էլ: Բայց կապվածության ձևավորման համար սկզբունքորեն կարևորվում է մոր դերը: Ի՞նչու է հենց մայրն ամենից լավ ապահովում երեխայի մոտ կայուն կապվածության ձևավորումը: Այս հարցը շատ հետազոտողների է հետաքրքրել: Բավականին փորձեր են արվել փոխարինել մորը այն դեպքում, երբ երեխան մորը կորցնում է, բայց բոլոր փորձերը ոչ այնքան արդյունավետ են: Այս հարցը մեզ հետաքրքրել է ծնողական խնամքից զուրկ երեխաների սոցիալական հարմարման համատեքստում:

Նոր տնտեսական հարաբերություններին անցնելը մեր իրականության մեջ առաջացրին բազմաթիվ կենսական, տնտեսական, սոցիալական, կրթական և այլարմույթ դժվարություններ, հիմնախնդիրներ:

Այսօր տարբեր բնույթի անբարենպաստ փոփոխությունները, սոցիալական ակնհայտ և ծայրահետ շերտավորումները, հասարակության գերակշռող մասի կենսամակարդակի կտրուկ անկումը, գործազրկության ճակարտակի աճումը, մուրացկանությունը, մարմնավաճառությունը և մի շաբաթ այլ բացասական երևույթները համընկնում են երկարատև պատերազմական իրավիճակների հետ և առաջացնում են այնպիսի պրոբլեմներ, որոնք հասարակության համար շատ ավելի դժվար լուծելի են, քան ցանկացած տնտեսական կամ քաղաքական հիմնախնդիր:

Դասարակության մեջ տեղի ունեցող ցանկացած սոցիալական ցնցում առաջին հերթին բացասարար է անդրադարձում ընտանիքի վրա և դրա համարժեք ներգործությունը կրում է այնտեղ մեծացող երեխան: Այսինքն՝ մեր կյանքում կատարվող բոլոր անբարենպաստ փոփոխությունները, նորամուծությունները, ակնհայտ կամ քողարկված այլափոխումները անմիջականորեն առաջինն իր վրա է կրում ընտանիքը, այնտեղ մեծացող երեխան ու նոր միայն հնձեղություն գտնում հասարակական գիտակցության մեջ: Դասարակական շատ երևույթներ, անկախ իրենց ընդունելի կամ մերժելի լինելուց, հասարակական գիտակցության մեջ տեղ գրադեցնող հայացքները, համոզմունքները և դիրքորոշումները վերջին հաշվով միջնորդավորված բնույթը ունեն, միջնորդված են ընտանիքի բնույթով, այնտեղ տիրող հարաբերություններով և բարոյահոգեբանական մթնոլորտով, ընտանիքի էթնիկական հիմքերով, արժեքային համակարգով և սոցիալական կողմնորոշումներով: Միայն այսպիսի մոտեցման պարագայում կարելի է լիարժեք հասկանալ և իմաստավորել, օրինակ, սոցիալական որբության, ծնողական

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Խնամքից գրկած երեխաների վարքի հոգեբանական և այլարնույթ պատճառականությունը:

Մեր հասարակարգում, որտեղ նորովի են դրվում բարոյական հիմքերը և դժվարությամբ հաղթահարվում առաջացող տարարնույթ խոչընդոտներն ու հիմնախնդիրները, էթնիկական ընտանիքը գրեթե դուրս է մնացել պատշաճ ուշադրությունից: Էթնիկական ընտանիքի հիմքերը որոշակիորեն ենթորմացվում են, խարիսխում է ընտանիքի բարոյական և արժեքային համակարգերի հիմքերը, ընտանիք են ներթափանցում օտար բարեր և արժեքներ և այլափոխում մեր ազգային զգացմունքները, մտածողությունը, ավանդույթները և սովորությունները: Ստեղծված սոցիալական իրավիճակի արդյունքում մեզանում էապես աճում է անբարենպաստ, անտարբեր հարաբերություններով ընտանիքների թիվը, համալրվում են մանկատներով ֆիզիկական և սոցիալական որբերով, ինչպես նաև հասուկ դաստիարակչական դպրոց-հիմնարկները, աճում է նաև մոլորացիկ, բափառաշրջիկ երեխաների թիվը: Այսօր մեծ թիվ են կազմում ծնողական խնամքից գրկված և մանկավարժութեան բարձիրողի երեխաները, որոնք դեզադապտացված են ընտանիքից, շրջապատի կյանքից:

Ծնողական խնամքից գրկված երեխաների անձի ձևավորման անբարենպաստ ընտանիքի տիպի և երեխայի վարքի շեղումների միջև կապին վերաբերող բազմաթիվ հետազոտություններով ապացուցված է, որ ա/ ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաները հոգեբանական հետազոտության ինքնուրույն հիմնախնդիր են, քանի որ նրանք յուրատիպ են իրենց հոգեկան յուրահատկություններով, անձնային և վարդագծային առանձնահատկություններով և սոցիալական ակտիվության մակարդակով, թ/ հոգեբանական հետազոտության առանձին հիմնախնդիր է այն նիկրոսմիջազայրը՝ իր սոցիալական-մանկավարժական համարժեք և ոչ համարժեք ներգործություններով, որտեղ ծնվել և որոշակի ժամանակահատվածում դաստիարակվել է ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխան: Այս հիմնախնդիրը ոչ միայն հոգեբանական է, այլ համալիր լուծում է պահանջում /մանկավարժների, սոցիոլոգների, ազգագրագետների, իրավաբանների և մարդաբանների մասնակցությամբ/, զ/ ծնողազուրկ երեխաներով հոգեբանական հետազոտության հիմնախնդիր են, այդ երեխաները միշտ էլ մտահոգել են հասարակությանը, նրանց նկատմամբ ցուցաբերվել է պետական հոգածություն: Այստեղ խոսքը վերաբերում է այն երեխաներին, որոնց ծնողները մահացել են տարբեր պատճառներով, և երեխաները որբացել են: Դա կոչվում է ֆիզիկական որբություն, երբ ֆիզիկական ընտանիքի մարդաբանների մասնակցությամբ/՝ զ/ ծնողազուրկ երեխաներով հոգեբանական հետազոտության հիմնախնդիր են, այդ երեխաները միշտ էլ մտահոգել են հասարակությանը, նրանց նկատմամբ ցուցաբերվել է պետական հոգածություն: Այստեղ խոսքը վերաբերում է այն երեխաներին, որոնց ծնողները մահացել են տարբեր պատճառներով, և երեխաները որբացել են: Դա կոչվում է ֆիզիկական որբություն, երբ ֆիզիկական ընտանիքի մարդաբանների մասնակցությամբ/՝ զ/ ծնողազուրկ երեխաներով հոգեբանական հետազոտության հիմնախնդիր են, այլն/՝, որովհետև ընտանիքի ծնողները չեն ապահովում անհրաժեշտ շերմություն և հոգատարություն երեխայի նկատմամբ: Այս տիպի ծնողական խնամքից գրկված, երենմն էլ ծնողազուրկ կարգավիճակ ձեռք բերած երեխաները նույնական առանձին և յուրատիպ հոգեբանական հետազոտության հիմնախնդիր են, քանի որ թե երեխաները և թե նրանց ծնողներն իրենց վրա են կրում տվյալ ժամանակահատվածի բոլոր դաշնությունները, ցնցումներն ու դժվարությունները, հանգանանքների ծննդան տակ հրաժարվում սեփական երեխաների խնամքից, գրկվում ծնողական իրավունքից և շրջապատի հարգալից վերաբերմունքից:

Մանկավարժա-հոգեբանական հետազոտության հիմնախնդիր է ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալականացման, դրա հոգեբանական պայմաններն ու օրինաչափությունները:

Այսօր հիմնական միկրոսոցիալական գործոնների շարքում առաջատար են ընտանիքի հիմնախնդիրները: Դանդես գալով հասարակության հիմնարար, բազային օղակ՝ ընտանիքը միաժամանակ երեխաների օպտիմալ զարգացման և բարեկեցության բնական միջավայր է: Դեռևսարար ընտանիքի հոգեբանական հիմնախնդիրների լուծումը առաջին հերթին միտված է երեխաների և հասարակության հոգեկան առողջության ա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

պահովմանը, ինչպես նաև մանկական անխմանության, երեխաների մանկավարժական և սոցիալական բարձրիքողության նախականինանը:

Դաշվի առնելով մեր ժամանակաշրջամի մատուցած կենսական և այլաբնույթ դժվարությունները՝ արդիական հոգեբանական հետազոտության հիմնախնդիր են «սոցիալական ռիսկի» դեղադաստացիայի խնդիր երեխաները, որոնք ապրում են ծանր, անբարենպաստ կենսապայմաններում: Վերջիններս վճռորոշ ախտահարող գործոններն են, որոնք ապակառուցողական ներգործություն ունեն երեխայի հոգեկան զարգացման և հոգեկան առողջության վրա: Այդ գործոններից են որորությունը /ֆիզիական և սոցիալական/, բռնությունը, վաղ ներգրավումը քրեածին միջավայրում, հաշմանդամությունը՝ կապված ֆիզիկական կամ հոգեկան թերության /դեֆեկտի/ հետ և այլն: Այս գործոնների առկայության շնորհիվ էլ երեխաներն ընդգրկվում են դեղադաստացիայի բարձր «սոցիալական ռիսկի» խնդիրի մեջ, որովհետև հեշտությամբ ընկալունակ են դառնում արտաքին անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ:

Ծնողական խնամքից գրկված և ծնողներ չունեցող երեխաների հետ աշխատանքը, նրանց ուսման և դաստիարակության հարցերի տնօրինումը, նրանց հասարակության մեջ ինտեգրումը ու հոգեկարգավորումն պահանջում են մի շարք հոգեբանական, սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների լուծում: Վերջիններիս վերաբերող հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ծնողագործ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական ադապտացիան /հարմարումը/ այդ գործընթացի օրեկտիվ և սուրբեկտիվ դժվարություններ են առաջացնում:

Ծնողագործ և ծնողական խնամքից գրկված երեխաները հոգեբանական հետազոտության հիմնախնդիր է ցանկացած երկրում, ցանկացած հասարակության համար: Ընդհանուր գժերով պատճառականությունն էլ գրեթե նույնն է երեխաները գրկվել են ծնողներից, մնացել անխման, դարձել են մանկավարժութեան բարձրիքողի և կանգնել են սոցիալական բարձրիքության ճանապարհին: Սակայն երբ ժանուրանում ենք այլ երկրների, այլ ազգությունների գիտնականների կողմից վերլուծված պատճառականության շղթային, ապա տեսնում ենք, որ թե պատճառների բնույթը է էականորեն տարրեր և թե նրանց կողմից առաջադրվող մոտեցումները: Մեզանում տարրեր բնածին, տեխնածին և սոցիալ-տնտեսական այլ բնույթի աղետներով և դժվարություններով, մեզ թեկադրված պատերազմով է պայմանավորված ծնողագործ և ծնողական խնամքից գրկված երեխաների առաջացումը: Այդ աղետների և սոցիալ-տնտեսական ցնցումների հետևանքները դեռևս հաղթահարված չեն և նման երեխաների թիվը նվազելու միտում չունի: Ծնողական ջերմության և հոգածության կարիք ունեցող երեխաների հոգեբանական և սոցիալական վերականգնման հոգեբանական մոտեցումներն ու մեխանիզմները դեռևս լիարժեքորեն մշակված չեն: Յետևարար բարձրացված հիմնախնդիր լուծումը հնարավորություն կտա հստակեցնելու ծնողներին և ծնողական խնամքից գրկվելու հոգեբանական պատճառականությունը և մշակել երեխաների հետ աշխատելու, նրանց հասարակության լիարժեք անդամ դարձնելու, սոցիումին հարմարվելու և ադապտիվ վարդ դրսնորելու մանկավարժան-հոգեբանական այնպիսի մեթոդներ և հանձնարարականներ, որոնք հարիր լինեն մեր ազգային պատկանելությամբ, ազգային մտածելակերպին, վարդին և գործելակերպին:

Ծնողագործ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական հարմարումը /կամ ադապտացիան/ ընթանում է յուրատիպ օրինաչափություններով: Սոցիալական ադապտացիան միաժամանակ ենթադրում է կյանքի պայմանների, սոցիալական իրողությունների և սոցիալական միջավայրի սոցիալական ներգործություններին և պահանջներին, կեցության, կենսակերպի փոփոխություններին համակերպվելու հնարավորություն և կարողություն: Ծնողական խնամքի և բարենպաստ կենսակերպի պայմաններում վերջիններս առանց էական դժվարությունների ծևավորում են ծնողները սեփական փորձը հաղորդելով ածող սերնդին: Խնդրո առարկա երեխաները ոչ միայն գրկված են այդ հնարավորություններից, այլև սոցիալական միջավայրին և կյանքին

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նրանց սակավ հարմարվողականությունը միջնորդված է անձնական դժվարությամբ և սոցիալական հոգեբանական անպաշտպանվածությամբ:

Սոցիալական կյանքին և միջավայրին ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների հարմարումը /աղապտացիան/ ուղեկցվում է օրյեկտիվ և սուրբեկտիվ բնույթի տարարուույթ դժվարություններով: Վերջիններս պայմանավորված են մի շարք վճռորոշ հանգամանքներով, սոցիալ-տնտեսական անմշիթար վիճակով, սոցիալական համարժեք և ոչ համարժեք ընկալումներով, մանկավարժական /երեխն էլ սոցիալապես/ բարձրիթողի վիճակով և որպես դրա հետևանք սոցիալական, ոչ բարյացական, անվստահելի, երեխն էլ բացասական վերաբերմունքով շրջապատի, շրջապատողների, ապագայի նկատմամբ, բնկալունակությամբ բացասական ներգործությունների նկատմամբ, ինչպես նաև սակավ, աղքատ կյանքի փորձով, ցածր հուզականությամբ, ցածր ինքնազնահատականով և այլն: Սոցիալական աղապտացիայի ընթացքի հաջողության ապահովումն անհրաժեշտարար պահանջում է մի շարք հոգեբանական պայմանների ապահովում. երեխաների մեջ դրական հույզերի, դրական վերաբերմունքի, սեփական ուժերի, կյանքի և շրջապատողների նկատմամբ վստահությամբ, ինքնագիտակցության, ինքնազնահատականի, բարոյագիտակցության և իրավագիտակցության ձևավորում և այլն:

Անձի սոցիալական աղապտացիայի հոգեբանական հիմնախմբիրը բավականաչափ մշակված է հոգեբանության մեջ, դրան են նվիրված բազմաթիվ հոգեբանների, մանկավարժների և սոցիոլոգների հետազոտություններ: Ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական աղապտացիան հետազոտության ընթացքում դիտարկվում է որպես նրանց սոցիալականացման կայացման և բնականուն ընթացք ունեցող գործնթաց, որի արդյունքում անձը ինքնահասատվում է, ծեռք բերում սոցիալական, բարոյական, իրավական և այլ արժեքների համակարգ և հեշտությամբ իմտեգրվում հասարակության մեջ: Սոցիալական աղապտացիայի դժվարությունների հոգեբանական վերլուծությունն ուղղված է ոչ այնքան օրյեկտիվ անբարենպաստ պայմանների և հանգամանքների բացահայտմանն ու քննարկմանը, այլ արավելապես նրան, որ հոգեբանական և մանկավարժական տարրեր մոտեցումների, մեթոդների և հնարքների օգնությամբ հնարավորություն տրվի ճակատագրի հարված ստացած երեխային ինքնահաստատվելու, ինքնահրացվելու, նրա մեջ կյանքի նկատմամբ դրական հույզեր առաջացնելու, ապրելու պահանջմունք արթնացնելու համար:

Ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական աղապտացիայի գործնթացն ընգրկում է երեք հիմնական փուլ, որոնք հանդիս են գալիս այդ գործնթացի հիմնական բաղադրատարրեր: Առաջին փուլում երեխաները հարմարվում են աղապտացիան իրականացնողներին, հարմարվում նրանց պահանջմներին, հոգեբանական կապի մեջ մտնում նրանց հետ: Երկրորդ փուլում երեխաները սկսում են հարմարվել այն մարդկանց /հասակակիցների, շրջապատող մեծահասակների/ հետ, որոնց հետ նրանք ապրում են, սովորում, անցկացնում աղքատ ժամանակը: Երրորդ փուլում երեխաներն իմտենսիվորեն հարմարվում են ստեղծված բարոյական նորմերին, համակեցության կանոններին յուրացնելով դրանք:

Ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական ոչ համարժեք ընկալումները, կենսապատկերացումները, կարծիքներն ու համոզմումները, վարքի ընդունելի և մերժելի ձևերը, սոցիալական և արժեքային կողմնորոշումներն ունեն օրյեկտիվ և սուրբեկտիվ պատճառականություն: Այդ պատճառների հոգեբանական վերլուծությունը նպատակառությամբ է դրանց նախազգուշացմանը և հաղթահարմանը, հետևարար երեխաների հոգսերի և պրոբեմների թերևացնանը:

Ծնողական հոգածությունից և խնամքից գրկված երեխաների սոցիալական աղապտացիան, սոցիալականացումը և մանկական միջավայրում նրանց ինտեգրումն իրականացնելիս հանդիպում են բազմաթիվ դժվարություններ և կոնֆլիկտածին իրավիճակներ: Այդ դժվարությունների պատճառներն առավելապես սուրբեկտիվ կամ հոգե-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՏԵՑ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

բանական են և պայմանավորված են նրանով, որ սոցիալական աղապտացիայի պահանջները բախվում են աղապտացվող երեխայի վարքի ստերեոտիպերին, բնավորության գծերին, մարդկանց և նրանց անձի և վարքի մասին նրանց պատկերացումներին, արժեքային համակարգին և այլն: Այդ հակասությունները բերում են կոնֆլիկտային իրավիճակների, որոնց լուծման հոգեբանական պայմանը երեխայի նկատմամբ անհատական մոտեցումն է, ջերմ ու մտերմական վերաբերմունքը:

Այսպիսով՝ ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական աղապտացիայի հաջողությունը պայմանավորված է համապատասխան ծրագրի մշակումով: Այդ ծրագիրը պետք է ներառի երկու կարևոր մասեր. առաջին՝ սոցիալական միջավայրին և նորմներին հարմարվելու միջոցառումներ և դրանց իրականացման գործնական-մեթոդական հանձնարարականներով և երկրորդ՝ մեթոդական հանձնարարականների մի համալիր այդ երեխաների սոցիալական վարքի հնարավոր շեղումները նախականինելու և հաղթահարելու նպատակով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Խօրչuk B.B. Современный словарь по психологии. Минск, 2000, стр. 134
2. Նալչաճյան A.A Социально-психическая адаптация личности (формы, механизмы и стратегии). Ер., 1988, стр. 20
3. Трапезникова Т.М.Формирование личности ребенка в условиях семьи//Человек:Индивидуальность,творчество, жизненый путь. СПб.:СПбГУ, 1998, стр. 90:
4. Նույն տեղում:
5. Բուլբի Ջկ. Привязанность /Пер. с англ. Н.Г.Григорьевой, Г.В.Бурменской; Общ. Ред. и вступ. ст. Г.В. Бурменской. М., 2003, стр. 206

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ծնողազուրկ եվ ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական հարմարման հիմնախնդիրները արդի պայմաններում
Էլլադա Բաղրամսարյան
Իննա Մկրտչյան**

Հոդվածում քննարկվում է ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների սոցիալական աղապտացիայի առանձնահատկություններն ու դժվարություններն արդի պայմաններում: Բացահայտվում է ծնողազուրկ և ծնողական խնամքից գրկված երեխաների հարմարման գործնարացի կառուցվածքային բաղադրատարերը, դրանց միջև հոգեբանական հարաբերակցությունը և օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի այն դժվարությունները, որոնք հանդիպում են հարմարման ընթացքում: Սոցիալական աղապտացիայի դժվարությունների վերլուծությունը ուղղված է ոչ այնքան օբյեկտիվ անբարենպաստ պայմանների և հանգամանքների բացահայտմանն ու քննարկմանը, այլ առավելապես նրան, որպեսզի հոգեբանական և մանկավարժական տարրեր մոտեցումների, մեթոդների և հնարքների օգնությամբ հնարավորություն տրվի ճակատագրի հարված ստացած երեխային ինքնահաստատվելու, ինքնահրացվելու, նրա մեջ կյանքի նկատմամբ դրական հույզեր առաջացնելու, ապրելու պահանջմունք աղթնացնելու համար:

РЕЗЮМЕ

Основные проблемы социальной адаптации в современных условиях сирот и детей, лишенных родительской опеки.

Эллада Багдасарян

Инна Мкртчян

Ключевые слова: сирота, лишенные родительской опеки, социальная адаптация, структурные компоненты, психологическое взаимодействие, самоутверждение, самореализация, положительные эмоции, жизненная потребность, неблагоприятные условия.

В статье обсуждаются особенности и сложности социальной адаптации сирот и детей, лишенных родительской опеки, в современных условиях. Раскрываются процесс и структурные компоненты адаптации сирот и детей, лишенных родительской опеки, среди которых психологическое взаимодействие и суть объективных и субъективных сложностей, которые встречаются в период адаптации. Анализ сложностей социальной адаптации касается не столько раскрытия объективных неблагоприятных обстоятельств, а преимущественно тому, чтобы разные психологические и педагогические подходы, методы и навыки дали возможность помочь детям, испытавшим удары судьбы, а самоутверждение и самореализация пробудили в них жизненно необходимые положительные эмоции.

SUMMARY

**The Main Problems of Social adaptation of orphans and children deprived of parental care
in Modern Conditions**

Ellada Baghdasaryan

Inna Mkrtchyan

Keywords: orphan, deprived of parental care, social adaptation, structural components, psychological interaction, self-affirmation, self-realization, positive emotions, vital need, unfavorable conditions.

The article discusses the peculiarities and difficulties of social adaptation of orphans and children deprived of parental care in modern conditions. The process and structural components of the adaptation of orphans and children deprived of parental care are disclosed, among them psychological interaction and the essence of the objective and subjective difficulties encountered in the period of adaptation. Analysis of the complexities of social adaptation concerns not so much the disclosure of objective unfavorable circumstances, but mainly that different psychological and pedagogical approaches, methods and skills provide an opportunity to help children who have suffered destinies, and self-affirmation and self-realization awaken vital positive emotions in them.